



**ԼԵՌԻԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում
Քաղաքացիական գործ ԸԻԴ N 2221/02/15թ.
Նախագահող դատավոր՝ Կ.Սաղյան
Դատավորներ՝ Հ.Աբրահամյան
 Հ.Գրիգորյան

Քաղաքացիական գործ ԸԻԴ N 2221/02/15թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԼԵՌԻԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք.Ստեփանակերտ

8 հուլիսի 2016թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)՝
վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր Վ.Հովսեփյանի
դատավորներ՝ Գ.Արզումանյանի
 Ի.Կարապետյանի

դռնբաց դատական նիստում, քննելով ըստ հայցի <<Արցախբանկ>> փակ բաժնետիրական ընկերության ընդդեմ <<ԿԱԿԱԴՈՒ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, Գեղամ Վիտալիի Քոչարյանի, Արմինե Վյաչեսլավի Ասժատրյանի՝ 7.271.363,9 ՀՀ դրամը, հաշվեգրվելիք տոկոսները և տույժերը գանձելու, գրավադրված գույքի, իսկ վերջինիս անբավարարության դեպքում այլ գույքի վրա բռնագանձում տարածելու մասին քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2016 թվականի ապրիլի 4-ի որոշման դեմ <<Արցախբանկ>> փակ բաժնետիրական ընկերության ներկայացուցիչ Տ.Ավետիսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ջ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

2015 թվականի նոյեմբերի 11-ին <<Արցախբանկ>> փակ բաժնետիրական ընկերությունը /այսուհետ՝ նաև Բանկ/ հայց հարուցելով դատարան, խնդրել է <<ԿԱԿԱԴՈՒ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից /այսուհետ՝ նաև Ընկերություն/ և Գեղամ Վիտալիի Քոչարյանից համապարտության կարգով բռնագանձել 7.271.363,9 ՀՀ դրամ, այդ թվում՝ վարկի գծով՝ 5.300.000 ՀՀ դրամ, որից ժամկետանց պարտավորությունը՝ 1 300.000 ՀՀ դրամ, տոկոսների գծով՝ 1.233.732,4 ՀՀ դրամ, որից ժամկետանց տոկոսագումարը՝ 1.079.524 ՀՀ դրամ,

տոկոսների գծով տույժ՝ 484.931,50 ՀՀ դրամ, վարկի գծով տույժ՝ 252.7000 ՀՀ դրամ: Բանկը միաժամանակ պահանջել է Ընկերությունից և Գեղամ Քոչարյանից համապարտության կարգով բռնագանձել 10.11.2015թ. սկսած մինչև պարտավորության փաստացի մարումը հաշվեգրվելիք տոկոսներն ու տույժերը, ինչպես նաև բռնագանձումը տարածել Արմինե Վյաչեսլավի Ասճատրյանին պատկանող գրավադրված գույքի վրա, իսկ վերջինիս անբավարարության դեպքում՝ այլ գույքի վրա:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը /այսուհետ՝ Առաջին աստիճանի դատարան/ 2016 թվականի փետրվարի 2-ի վճռով հայցը բավարարել է մասնակի: Վճռվել է Ընկերությունից և Գեղամ Քոչարյանից համապարտության կարգով հոգուտ Բանկի բռնագանձել 6.533.732,4 ՀՀ դրամ, որից 5.300.000 ՀՀ դրամ՝ վարկի գումար, 1.233.732,4 ՀՀ դրամ՝ վարկի նկատմամբ հաշվարկված տոկոս, ինչպես նաև 11.11.2015թ. սկսած մինչև 26.02.2019թ. ընթացիկ վարկի գումարի նկատմամբ տարեկան 18% տոկոսադրույքով հաշվարկվող տոկոսագումար: Ընկերությունից հոգուտ Բանկի վճռվել է նաև գանձել չվճարված ժամկետանց վարկի և տոկոսագումարների նկատմամբ՝ ժամկետանց դառնալու պահից մինչև ժամկետանց վարկի և տոկոսագումարի փաստացի մարման օրը հաշվարկված տույժ՝ տարեկան 36 % տոկոսադրույքով: Բռնագանձումը տարածվել է Արմինե Ասճատրյանին սեփականության իրավունքով պատկանող Ստեփանակերտ քաղաքի Ս.Դավիթ 60/24 հասցեով գտնվող բնակարանի վրա: Բանկի հայցապահանջները՝ ժամկետանց վարկի գումարի նկատմամբ մինչև պարտավորության փաստացի մարումը տարեկան 18 % տոկոսադրույքով տոկոսներ հաշվեգրելու ու գանձելու, Գեղամ Քոչարյանից տույժի գումարները գանձելու, Ընկերության գույքի վրա բռնագանձում տարածելու մասին, մերժվել են:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի /այսուհետ՝ Վերաքննիչ դատարան/ 2016 թվականի ապրիլի 4-ի որոշմամբ Բանկի ներկայացուցիչ Ս.Ավետիսյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, Առաջին աստիճանի դատարանի վճիռը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

Նշված որոշման դեմ 2016 թվականի մայիսի 4-ին վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկի ներկայացուցիչ Ս.Ավետիսյանը՝ խնդրելով բեկանել Վերաքննիչ դատարանի 2016 թվականի ապրիլի 4-ի որոշումը և գործն ուղարկել Առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության:

ԼՂՀ Գերագույն դատարանի 2016 թվականի մայիսի 19-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձվել է՝ բողոքում թույլ տրված ձևական սխալները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար սահմանելով 20-օրյա ժամկետ:

2016 թվականի հունիսի 13-ին Բանկի ներկայացուցիչ Ս.Ավետիսյանը կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Գերագույն դատարանի 2016 թվականի հունիսի 22-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է նյութական և դատավարական իրավունքի մի շարք նորմեր, ինչն էլ հանգեցրել է գործի սխալ լուծման: Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ կողմերի միջև կնքված վարկային պայմանագիրը բավարարում է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 888-րդ հոդվածի, 879-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 880-րդ հոդվածի 1-ին մասի, 881-րդ

հողվածի 1-ին մասի, 369-րդ հողվածի, 370-րդ հողվածի պահանջները: Քանի որ վարկը փաստացի մարված չէ, Բանկը, հիմք ընդունելով կողմերի միջև կնքված վարկային պայմանագրի դրույթները, որոնցից հետևում է, որ վարկային պայմանագրով նախատեսված վարկի գումարի վերադարձման վերջնաժամկետից հետո պայմանագրով սահմանված տոկոսագումարները հաշվարկման ենթակա են, պարտապան Ընկերությունից և երաշխավոր Գեղամ Քոչարյանից համապարտության կարգով պահանջել է բռնագանձել 10.11.2015թ. սկսած մինչև պարտավորության փաստացի մարումը հաշվեգրվելիք տոկոսները: Ստորադաս դատարանները, սակայն, անհիմն կերպով մերժել են այդ հայցապահանջը:

Վերաքննիչ դատարանը, ուժի մեջ թողնելով Առաջին աստիճանի դատարանի վճիռը, որով մերժվել է 10.11.2015թ. սկսած մինչև պարտավորության փաստացի մարումը հաշվեգրվելիք տույժերը համապարտության կարգով Գեղամ Քոչարյանից գանձելու մասին հայցապահանջը, հաշվի չի առել, որ Բանկի ու Գեղամ Քոչարյանի միջև կնքված երաշխավորության պայմանագիրը բավարարում է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 375-րդ և 376-րդ հոդվածների պահանջները, որ երաշխավոր Գեղամ Քոչարյանը Ընկերության հետ միասին մինչև պարտավորության փաստացի մարումը կրում է վարկային պայմանագիրը չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով հաշվարկված տույժերը հատուցելու համապարտ պարտականություն: Ստորադաս դատարանները սխալ են մեկնաբանել երաշխավորության պայմանագիրը. անտեսել են այդ պայմանագրի 2.1 և 2.2 կետերը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ վարկային պայմանագիրը կնքվել է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ և 437-րդ հոդվածների պահանջների պահպանմամբ, վարկառուն գիտակցել է իր կողմից վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտման համար պատասխանատվության պայմանները, այն է՝ վարկի գումարը սահմանված ժամկետում չմարելու դեպքում սկզբնական տոկոսադրույթին գումարվում է տույժ՝ ժամկետանց գումարի տարեկան 36,5 % -ի չափով, իսկ սահմանված ժամկետում տոկոսագումարները չվճարելու համար վարկառուն վճարում է տույժ՝ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար ժամկետանց տոկոսագումարի տարեկան 73 %-ի չափով: Ստորադաս դատարանների կողմից վարկային պայմանագրով նախատեսված 73 %-ի չափով տույժը պակասեցնելը և այն 36 % դարձնելը ակնհայտ անհիմն է, քանի որ ի խախտումն ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածի պահանջի, չի հիմնավորվել, թե վարկառու Ընկերության կողմից վարկային պարտավորությունների խախտման պայմաններում հաշվարկված տուժանքի չափը որքանով է անհամաչափ պարտավորության խախտման հետևանքներին:

Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 50-րդ հոդվածի 1-ին մասը, 240-րդ հոդվածը՝ վարկային և երաշխավորության պայմանագրերը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի վերլուծել և չի գնահատել:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2016 թվականի ապրիլի 4-ի որոշումը և գործն ուղարկել Առաջին աստիճանի դատարան նոր քննության:

3.Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

1. 2014 թվականի փետրվարի 26-ին Բանկի և Ընկերության միջև կնքվել է թիվ 16 վարկային պայմանագիրը, որի 1.1 կետի հիման վրա Ընկերությանը

տրամադրվել է 6.000.000 ՀՀ դրամ գումարի չափով վարկ՝ տարեկան 18 % տոկոսադրույքով՝ մինչև 26.02.2019թ. մարելու պայմանով:

2. Վարկային պայմանագրի 3.1 կետի համաձայն՝ տրամադրված վարկի փաստացի մնացորդի դիմաց հաշվարկված տոկոսները վճարվելու են վարկավորմանը հաջորդող ամսից սկսած՝ յուրաքանչյուր ամիս, իսկ 1.1 կետում նշված վարկի մարումներն իրականացվելու են 26.03.2014թ.-ից սկսած՝ յուրաքանչյուր ամսի 26-ին: Վարկային պայմանագրի 4.3.1 կետի համաձայն՝ վարկառուն պարտավորվում է վարկը և /կամ/ հաշվարկված տոկոսագումարները վերադարձնել ժամանակին, իսկ ժամկետանցի դեպքում վճարել նաև նույն պայմանագրով սահմանված տույժերը: Վարկային պայմանագրի 5.1 կետի համաձայն՝ վարկային պայմանագրի համաձայն հաշվարկված տոկոսագումարները ժամանակին չվճարելու համար վարկառուն վճարում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար ժամկետանց տոկոսագումարի տարեկան 73 %-ի չափով, 5.2 կետի համաձայն՝ վարկի գումարը, այդ թվում մասնակի մարումների գումարները ժամանակին չվճարելու դեպքում վարկի սկզբնական տոկոսադրույքին գումարվում է տույժ՝ ժամկետանց գումարի տարեկան 36,5 % -ի չափով: Վարկային պայմանագրի 6.1 կետի համաձայն՝ վարկային պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև դրանով նախատեսված պարտավորությունների ամբողջական կատարումը:

3. 2014 թվականի փետրվարի 26-ին Բանկի /որպես վարկատու/, Ընկերության /որպես պարտապան/ ու Գեղամ Քոչարյանի /որպես երաշխավոր/ միջև կնքված թիվ 16/2 երաշխավորության պայմանագրի 1.1, 2.1, 2.2 կետերով Գեղամ Քոչարյանը Բանկի առջև պարտավորվել է Ընկերության հետ միասին համապարտ պատասխանատվություն կրել Ընկերության կողմից վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների լրիվ կատարման համար: Նշված պայմանագրի 2.2 կետով Գեղամ Քոչարյանը պարտավորվել է երաշխավորության պայմանագրի 1.1 կետում նշված վճարման ժամկետը լրանալուց հետո վարկատուի առաջին իսկ պահանջով 3 օրվա ընթացքում վերջինիս վճարել պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով առաջացած վարկատուի այլ վնասները:

4. Բանկի ներկայացրած տեղեկանքի համաձայն՝ Ընկերության պարտքը 10.11.2015թ. դրությամբ կազմում է 7.271.363,90 ՀՀ դրամ, այդ թվում՝ վարկի գծով՝ 5.300.000 ՀՀ դրամ, որից ժամկետանց պարտավորությունը՝ 1.300.000 ՀՀ դրամ, տոկոսների գծով՝ 1.233.732,4 ՀՀ դրամ, որից ժամկետանց տոկոսագումարը՝ 1.079.524 ՀՀ դրամ, տոկոսների գծով տույժ՝ 484.931,50 ՀՀ դրամ, վարկի գծով տույժ՝ 252.700 ՀՀ դրամ:

4.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է բողոքում բարձրացված հարցերի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշման՝ օրենքի միատեսակ կիրառության համար էական նշանակություն ունենալու և դատական սխալի առկայության հանգամանքներով:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքում բարձրացված են հետևյալ իրավական հարցերը.

-վարկի գումարի նկատմամբ վարկի մարման վերջնաժամկետի ավարտից հետո մինչև պարտավորության փաստացի մարման օրը տարեկան 18 % տոկոսադրույքով տոկոսները վարկառու Ընկերությունից ու երաշխավոր Գեղամ Քոչարյանից հաշվարկման ու գանձման ենթակա± են, թե ոչ.

-վարկային պայմանագիրը չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով հաշվարկված տույժերը հատուցելու պարտականություն երաշխավոր Գեղամ Քոչարյանը կրու՞մ է, թե՛ ոչ:

-պարտավորության կետանցի դեպքում վարկային պայմանագրով նախատեսված տույժը պարտավորության խախտման հետևանքներին համաչափ է, թե՛ ոչ:

Գերագույն դատարանը գտնում է, որ՝

1/ Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործով Առաջին աստանի դատարանը, վարկի գումարի նկատմամբ վարկի մարման վերջնաժամկետի ավարտից հետո մինչև պարտավորության փաստացի մարման օրը տարեկան 18 % տոկոսադրույքով տոկոսներ հաշվեգրելու ու գանձելու մասին հայցապահանջը մերժելով, պատճառաբանել է, որ «Բանկի և Ընկերության միջև կնքված վարկային պայմանագրի 3.1-րդ կետի համաձայն՝ վարկի փաստացի մնացորդի դիմաց հաշվարկված տոկոսները վճարվելու են վարկավորմանը հաջորդող ամսից սկսած յուրաքանչյուր ամիս, իսկ 1.1-րդ կետում նշված վարկի մարումներն իրականացվելու են 26.03.2014թ. սկսած՝ յուրաքանչյուր ամսի 26-ին: Պայմանագրի 5.1-րդ և 5.2-րդ կետերով նախատեսված է, որ պայմանագրով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում պարտապանը վճարում է տույժ ինչպես ժամկետանց վարկի, այնպես էլ ժամկետանց տոկոսագումարի նկատմամբ: Ժամկետանց վարկի գումարի նկատմամբ տոկոսներ հաշվարկելու և վճարելու վերաբերյալ պայման պայմանագրով նախատեսված չէ»:

Վերաքննիչ դատարանը, մերժելով վերաքննիչ բողոքը, պատճառաբանել է, որ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 47-րդ գլուխը / ներկայումս գործող՝ 48-րդ/ վարկային պայմանագրով նախատեսված տոկոսների վերաբերյալ որևէ կարգավորում չի պարունակում, հետևաբար՝ պետք է կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 881-րդ հոդվածի 1-ին մասը / ներկայումս գործող՝ 880-րդ/, համաձայն որի՝ եթե փոխառուն սահմանված ժամկետում չի վերադարձնում փոխառության գումարը, ապա փոխառության պայմանագրով նախատեսված տոկոսները դադարում են, իսկ այդ գումարին ենթակա են վճարման միայն նույն օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված չափով տոկոսներ, սկսած այն օրվանից, երբ գումարը պետք է վերադարձվեր մինչև գումարը փոխատուին վերադարձնելու օրը: Ինչ վերաբերում է վարկային պայմանագրում այլ բան սահմանված լինելուն, ապա նման համաձայնությունը, ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 881-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության ուժով, առոչինչ է:

Ստորադաս դատարանների վերոնշված պատճառաբանությունները Գերագույն դատարանն իրավաչափ չի համարում:

Այսպես, ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարկային պայմանագրով բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը /վարկատուն/ պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ /վարկ/ տրամադրել փոխառուին, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ կիրառվում են նույն օրենսգրքի 47-րդ գլխում նախատեսված կանոնները, եթե այլ բան նախատեսված չէ նույն գլխի կանոններով և վարկային պայմանագրով:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 880-րդ հոդվածը սահմանում է. «<1. Եթե փոխառուն սահմանված ժամկետում չի վերադարձնում փոխառության գումարը, ապա փոխառության պայմանագրով նախատեսված տոկոսները դադարում են, իսկ այդ գումարին ենթակա են վճարման միայն սույն օրենսգրքի 411 հոդվածի 1-ին կետով նախատեսված չափով տոկոսներ, սկսած այն օրվանից, երբ գումարը պետք է վերադարձվեր մինչև գումարը փոխատուին վերադարձնելու օրը: Փոխառության պայմանագրում այլ պայմաններով տոկոսներ վճարելու վերաբերյալ համաձայնությունն առոչինչ է: 2. Եթե փոխառության պայմանագրով նախատեսված է փոխառությունը վերադարձնել մաս առ մաս (տարածամկետ), ապա փոխառուի կողմից փոխառության հերթական մասը վերադարձնելու համար որոշված ժամկետը խախտելու դեպքում փոխատուն իրավունք ունի պահանջել վերադարձնելու փոխառության մնացած ամբողջ գումարը՝ հասանելիք տոկոսների հետ միասին»:

Նշված իրավանորմերից հետևում է, որ վարկային հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսդրության՝ փոխառության ու վարկի մասին նորմերով, մինևսյն ժամանակ, վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի՝ փոխառությանը վերաբերող 47-րդ գլխում նախատեսված կանոնները չեն կիրառվում, եթե կողմերը այլ կանոններ են սահմանել վարկային պայմանագրով, և որոնք չեն հակասում վարկային հարաբերությունները կարգավորող նորմերի պահանջներին: Այսինքն՝ վարկային պայմանագրի իրավակարգավորումը փոխառության պայմանագրի նորմերի հիման վրա կատարվում է միայն վարկային պայմանագրի էությանը չհակասող մասով: Ընդ որում, օրենսդիրը, ելնելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ և 437-րդ հոդվածներում ամրագրված պայմանագրի ազատության սկզբունքից, կողմերին հնարավորություն է տալիս պայմանները որոշել իրենց հայեցողությամբ, բացառությամբ այն դեպքի, երբ համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանված է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վարկին վերաբերող 48-րդ գլխի իմպերատիվ նորմերով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Գերագույն դատարանը գտնում է, որ վարկային պայմանագրով տոկոսների հաշվարկման ժամկետի հարցը յուրաքանչյուր դեպքում որոշվում է վարկային պայմանագրի դրույթների վերլուծության ու գնահատման արդյունքում:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ այդ սկզբունքն է կիրառելի համարել նաև Առաջին աստիճանի դատարանը, մինչդեռ Վերաքննիչ դատարանի կարծիքով, անկախ վարկային պայմանագրի կարգավորումներից, պարտավորության կետանցի դեպքում պետք է հաշվարկվեն ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված տոկոսները:

Գերագույն դատարանը սույն բողոքի շրջանակներում կարևորում է վարկային պայմանագրերում կիրառվող ժամկետների մեկնաբանման ու վերլուծության հարցը:

Վարկային պայմանագրի գործողության ժամկետը որոշվում է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածով սահմանված ընդհանուր կանոններով, այն է՝ «<1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքելու պահից: 2. Կողմերն իրավունք ունեն սահմանելու, որ իրենց կնքած պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիր կնքելն իրենց միջև ծագած հարաբերությունների նկատմամբ: 3. Օրենքով կամ պայմանագրով կարող է նախատեսվել, որ պայմանագրի գործողության ժամկետի ավարտով դադարում են կողմերի պարտավորությունները: Պայմանագիրը, որում բացակայում է նման պայմանը, գործում է մինչև դրանով որոշված պարտավորության կատարման

ավարտը: 4. Պայմանագրի գործողության ժամկետի ավարտը կողմերին չի ազատում մինչ այդ պայմանագիրը խախտելու համար պատասխանատվությունից>>:

Վարկային պայմանագրի գործողության ժամկետը տարբերվում է վարկի ժամկետից: Վարկի ժամկետը վարկառուի կողմից վարկը ստանալու և այն վերադարձնելու միջև ընկած ժամկետն է, որն իր հերթին կարող է պարունակել առանձին ժամկետներ /վարկի մարման ժամկետներ/:

Իր իրավաբանական բնույթով տոկոսների հաշվարկման ժամկետը վարկատուի՝ տոկոսներ հաշվարկելու իրավունք ունենալու ժամկետն է:

Սույն գործով 2014 թվականի փետրվարի 26-ին Բանկի և Ընկերության միջև կնքված վարկային պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ վարկային պարտավորությունները /պայմանագրի առարկան/ կազմում է հետևյալը. <<Վարկատուն վարկառուին տրամադրում է 6.000.000 /վեց միլիոն/ ՀՀ դրամի չափով վարկ 18% տարեկան տոկոսադրույքով, մինչև 26.02.2019թ. մարտելու պայմանով>>: Պայմանագրի 3.1 կետը սահմանում է. <<Սույն պայմանագրի համաձայն տրամադրված վարկի փաստացի մնացորդի դիմաց հաշվարկված տոկոսները վճարվելու են վարկավորմանը հաջորդող ամսից սկսած՝ յուրաքանչյուր ամիս, իսկ 1.1 կետում նշված վարկի մարումները իրականացվելու են 26.03.2014թ. սկսած՝ յուրաքանչյուր ամսի 26-ին>>: Պայմանագրի 4.3.1 կետի համաձայն՝ <<Վարկատուն պարտավորվում է վարկը և /կամ/ հաշվարկված տոկոսագումարները վերադարձնել ժամանակին, իսկ ժամկետանցի դեպքում վճարել նաև սույն պայմանագրով սահմանված տույժերը>>: Պայմանագրի 5.1 և 5.2 կետերը սահմանում են, որ վարկային պայմանագրի համաձայն հաշվարկված տոկոսագումարները ժամանակին չվճարելու համար վարկառուն վճարում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար ժամկետանց տոկոսագումարի տարեկան 73 %-ի չափով, իսկ վարկի գումարը, այդ թվում՝ մասնակի մարումների գումարները ժամանակին չվճարելու դեպքում վարկի սկզբնական տոկոսադրույքին գումարվում է տույժ՝ ժամկետանց գումարի տարեկան 36.5 %-ի չափով: Պայմանագրի 6.1 կետի համաձայն՝ պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև դրանում նախատեսված պարտավորությունների ամբողջական կատարումը:

Գերագույն դատարանի գնահատմամբ Առաջին ատյանի դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ ժամկետանց վարկի գումարի նկատմամբ մինչև պարտավորության փաստացի մարման օրը տարեկան 18 % տոկոսադրույքով տոկոսներ վճարելու վերաբերյալ <<ԿԱԿԱԴՈՒԻ>> ՍՊԸ-ն պարտավորություն չի կրում, քանի որ <<ժամկետանց վարկի գումարի նկատմամբ տոկոսներ հաշվարկելու և վճարելու վերաբերյալ պայման պայմանագրով նախատեսված չէ>>, չի բխում վարկային պայմանագրի վերոնշված դրույթներից, որոնք պատասխանող կողմը երբևէ չի վիճարկել /պատասխանողը հայցը չի ընդունել միայն տույժերի մասով/:

Գերագույն դատարանը նաև արձանագրում է, որ, ի տարբերություն փոխառության պայմանագրի, վարկային պայմանագրին օրենսդիրն առաջադրել է տոկոսների հաշվարկման պարտադիր պայման, ինչը դրված է հենց վարկային պայմանագրի օրենսդրական բնորոշման հիմքում: Բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը /վարկատուն/ պարտավորվում են պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ /վարկ/ տրամադրել փոխառուին, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից: Վարկառուի կողմից վարկի գումարի նկատմամբ վարկային պայմանագրով սահմանված չափով ու կարգով վճարվող տոկոսները հանդիսանում են վարկի օգտագործման դիմաց վճար /վարկային պարտավորություն/ ու չեն կարող դիտարկվել իբրև պարտավորության խախտման համար

պատասխանատվության միջոց: Մինչդեռ, Առաջին ատյանի դատարանը վարկի գումարի նկատմամբ վարկային պայմանագրով սահմանված տոկոսները փաստացի նույնացրել է վարկի գումարը և հաշվարկված տոկոսագումարները ժամանակին չվճարելու համար պայմանագրով նախատեսված տույժերին /տոկոսներին/, ինչն իրավաչափ համարվել չի կարող:

Այսպիսով, Առաջին ատյանի դատարանը տվյալ դեպքում սխալ է մեկնաբանել վարկային պայմանագիրը, վարկային պայմանագրի վերաբերելի դրույթները, այն է՝ 1.1, 3.1, 4.3.1, 6.1 կետերը կիրառելու և գնահատելու փոխարեն կիրառել է 5.1 և 5.2 կետերը, որոնք նախատեսում են տույժ՝ վարկային պայմանագրի համաձայն հաշվարկված տոկոսագումարները ու վարկի գումարը, այդ թվում՝ մասնակի մարումների գումարները ժամանակին չվճարելու դեպքում:

Գերագույն դատարանի վերոնշված հիմնավորումներով հերքվում են նաև Վերաքննիչ դատարանի իրավական մեկնաբանությունները, որոնք Գերագույն դատարանի կողմից գնահատման առարկա են դարձել նաև նախկինում /տե'ս ըստ հայցի <<Արցախբանկ>> փակ բաժնետիրական ընկերությունն ընդդեմ Վլադիմիր Գրիգորյանի և մյուսների՝ թիվ 2431/02/15թ. քաղաքացիական գործով Գերագույն դատարանի 04.07. 2016 թ. որոշումը/:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի պայմանները մեկնաբանելիս՝ դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Պայմանագրի պայմանի տառացի նշանակությունը պարզ չլինելու դեպքում այն սահմանվում է պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե այդ հոդվածի 1-ին կետում պարունակվող կանոնները հնարավորություն չեն տալիս որոշել պայմանագրի բովանդակությունը, ապա պետք է պարզվի կողմերի իրական ընդհանուր կամքը՝ հաշվի առնելով պայմանագրի նպատակը: Ընդ որում, նկատի են առնվում բոլոր համապատասխան հանգամանքները՝ ներառյալ պայմանագրին նախորդող բանակցությունները և թղթակցությունը, կողմերի փոխադարձ հարաբերություններում հաստատված գործելակերպը, գործարար շրջանառության սովորույթները, կողմերի հետագա վարքը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանի վճիռը պետք է լինի օրինական, հիմնավորված և պատճառաբանված:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետի <<ա>> և <<բ>> ենթակետերի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի վճռի պատճառաբանական մասը պետք է պարունակի ապացուցման ենթակա փաստերը՝ շարադրելով ապացուցման ենթակա յուրաքանչյուր փաստը, առաջին ատյանի դատարանի եզրակացությունը՝ տվյալ փաստի ապացուցված լինելու վերաբերյալ՝ գնահատելով տվյալ փաստի հաստատման կամ մերժման համար գործին մասնակցող անձանց ներկայացրած յուրաքանչյուր ապացույցը՝ նույն օրենսգրքի 47-րդ և 49-րդ հոդվածներին համապատասխան:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի <<ա>> և <<բ>> ենթակետերի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշման պատճառաբանական մասը պետք է պարունակի եզրահանգում՝ բողոքի յուրաքանչյուր հիմքի հիմնավոր լինելու վերաբերյալ, մասնավորապես, պատասխանելով հետևյալ հարցերին՝ արդյո՞ք հիմնավոր է վերաքննիչ բողոքի հիմքը՝ բողոքում տվյալ հիմքի վերաբերյալ նշված հիմնավորումների սահմաններում: Եթե վերաքննիչ բողոքի հիմքում դրված պահանջը հիմնավոր չէ,

ապա իժնչ հիմնավորմամբ՝ հղում կատարելով միջազգային պայմանագրերի, օրենքների և այլ իրավական ակտերի այն նորմերին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանի այն որոշումներին, որոնց հիման վրա վերաքննիչ դատարանը գտնում է, որ բողոքի հիմքում դրված պահանջը հիմնավոր չէ:

2/Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երաշխավորը, երաշխավորության պայմանագրով, այլ անձի պարտատիրոջ առջև պարտավորվում է պատասխանատվություն կրել այդ անձի կողմից իր պարտավորությունը լրիվ կամ մասնակի կատարելու համար:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 377-րդ հոդվածը սահմանում է. << Պարտապանի կողմից երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում երաշխավորը և պարտապանը պարտատիրոջ առջև կրում են համապարտ պատասխանատվություն, եթե երաշխավորի սուբսիդիար պատասխանատվություն նախատեսված չէ օրենքով կամ երաշխավորության պայմանագրով: 2. Երաշխավորը պարտատիրոջ առջև պատասխանատվություն է կրում նույն ծավալով, ինչ պարտապանը՝ ներառյալ տոկոսներ վճարելը, պարտքը բռնագանձելու կապակցությամբ դատական ծախսերը և պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով առաջացած՝ պարտատիրոջ այլ վնասները հատուցելը, եթե այլ բան նախատեսված չէ երաշխավորության պայմանագրով: 3. Համատեղ երաշխավորություն ստանձնած անձինք պարտատիրոջ առջև պատասխանատվություն են կրում համապարտ, եթե այլ բան նախատեսված չէ երաշխավորության պայմանագրով>>:

Սույն գործով Առաջին ատյանի դատարանը 10.11.2015 թվականից սկսած մինչև պարտավորության փաստացի մարումը հաշվեգրվելիք տույժերը համապարտության կարգով Գեղամ Քոչարյանից գանձելու մասին հայցապահանջը մերժել է՝ պատճառաբանելով, թե երաշխավորության պայմանագրի 1.1 կետի համաձայն Գեղամ Քոչարյանը Բանկի առջև համապարտ պարտավորություն է ստանձնել միայն <<ԿԱԿԱԴՈՒ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ստացված 6.000.000 դրամ վարկը տարեկան 18 տոկոս տոկոսադրույքով մինչև 2019թ. փետրվարի 26-ը վերադարձնելու մասին պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, իսկ մինչև պարտավորության փաստացի մարումը տույժերի մասով պատասխանատվություն չի ստանձնել:

Վերաքննիչ դատարանը Առաջին ատյանի դատարանի պատճառաբանությունները համարել է իրավաչափ ու մերժել վերաքննիչ բողոքը:

Մինչդեռ Բանկի /վարկատու/, Ընկերության /պարտապան/ ու Գեղամ Քոչարյանի /երաշխավոր/ միջև 2014թ. փետրվարի 26-ին կնքված թիվ 16/2 երաշխավորության պայմանագրի 1.1 կետով Գեղամ Քոչարյանը Բանկի առջև պարտավորվել է Ընկերության հետ միասին համապարտ պատասխանատվություն կրել Ընկերության կողմից վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների լրիվ կատարման համար: Նշված պայմանագրի 2.2 կետով Գեղամ Քոչարյանը պարտավորվել է երաշխավորության պայմանագրի 1.1 կետում նշված վճարման ժամկետը լրանալուց հետո վարկատուի առաջին իսկ պահանջով 3 օրվա ընթացքում վերջինիս վճարել պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով առաջացած վարկատուի այլ վնասները: Երաշխավորության պայմանագրի 3.1 կետի համաձայն՝

երաշխավորությունը դադարում է, եթե վարկատուն երաշխավորությամբ ապահովված պարտավորության կատարման ժամկետը լրանալուց հետո մեկ տարվա ընթացքում երաշխավորին վճարելու վերաբերյալ որևէ պահանջ չի ներկայացրել, ինչպես նաև ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 382-րդ հոդվածով նախատեսված հիմքերի ու պայմանների առկայության դեպքում:

Գերագույն դատարանը գտնում է, որ ինչպես Վերաքննիչ դատարանը, այնպես էլ Առաջին ատյանի դատարանը երաշխավոր Գեղամ Քոչարյանի պատասխանատվության ծավալը սահմանափակել են՝ առանց ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածով սահմանված կանոններով գնահատելու երաշխավորության պայմանագրի բոլոր դրույթները: Ընդ որում, հատկանշական է, որ երաշխավոր Գեղամ Քոչարյանն ինքը միաժամանակ հանդիսանում է «Կակադու» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենը և չէր կարող չզիտակցել պայմանագրերի էությունը:

3/Վճռաբեկ բողոքը երրորդ հիմքով անհիմն է՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 369-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տուժանք /տուժանք, տույժ/ է համարվում օրենքով կամ պայմանագրով որոշված այն դրամական գումարը, որը պարտապանը պարտավոր է վճարել պարտատիրոջը՝ պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում՝ ներառյալ կատարման կետանցի դեպքում: Տուժանք վճարելու պահանջով պարտատերը պարտավոր չէ ապացուցել, որ իրեն վնաս է պատճառվել:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածի համաձայն՝ եթե վճարման ենթակա տուժանքն ակնհայտորեն անհամաչափ է պարտավորության խախտման հետևանքներին, դատարանն իրավունք ունի պակասեցնել այն:

Հետևում է, որ օրենսդիրը նախատեսել է տուժանքը դատական կարգով պակասեցնելու իրավական հնարավորություն: Ընդ որում, տուժանքը կարող է պակասեցվել միայն այն դեպքում, երբ վճարման ենթակա տուժանքն ակնհայտորեն անհամաչափ է պարտավորության խախտման հետևանքներին:

Գերագույն դատարանը, նախկինում կայացրած իր որոշման մեջ անդրադառնալով տուժանքի չափը պակասեցնելու հարցին, նշել է, որ թեև տուժանքի չափը պակասեցնելը դատարանի իրավունքն է, այդուհանդերձ իրավունքի չարաշահումը կանխելու տեսանկյունից այն նաև դատարանի պարտականությունն է, քանի որ բոլոր դեպքերում խոսքը գնում է սահմանված տուժանքի չափի և պարտավորության խախտման հետևանքների միջև հավասարակշռության կամ ողջամիտ հարաբերակցության ապահովման մասին /տե՛ս «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերությունն ընդդեմ Էրիկ Մարտիրոսյանի և Ատոմ Մխիթարյանի՝ թիվ 1501/02/14 քաղաքացիական գործով Գերագույն դատարանի 10.09. 2015թ. որոշումը/:

Սույն գործով Առաջին ատյանի դատարանը պատճառաբանել է, որ «Հայցվորին վճարման ենթակա տույժի գումարը, որը հաշվարկվում է սահմանված ժամկետում չվճարված վարկի գումարի նկատմամբ տարեկան 54.5 տոկոս, իսկ տոկոսագումարի նկատմամբ՝ տարեկան 73 տոկոս տոկոսադրույքով, ակնհայտորեն անհամաչափ է պատասխանողի կողմից պարտավորության խախտման համար նախատեսվող հետևանքներին: Հետևաբար՝ Դատարանը գտնում է, որ ժամկետանց վարկի և տոկոսագումարների նկատմամբ հաշվարկվող տույժի չափը պետք է պակասեցնել և ժամկետանց գումարների նկատմամբ տույժի հաշվարկի համար հիմք ընդունել տարեկան 36 տոկոս տոկոսադրույքը >>:

Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը, որով ուժի մեջ է թողնվել տուժանքի չափը պակասեցնելու մասին Առաջին ատյանի դատարանի վճիռը, իրավաչափ է, քանի որ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածը կիրառելու համար գործով առկա են բոլոր հիմքերը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի առաջին և երկրորդ հիմքերի առկայությունը Գերագույն դատարանը համարում է բավարար՝ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 240-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ գործի նյութերը թույլ են տալիս կայացնելու որոշում՝ առանց գործը նոր քննության ուղարկելու, Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում կիրառելու ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 4-րդ կետը, համաձայն որի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով Գերագույն դատարանը մասնակիորեն բեկանում և փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի կողմից հաստատված հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Քանի որ վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարվել է տույժերը գանձելու մասով, իսկ այդ մասով վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման, հետևաբար՝ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2016 թվականի ապրիլի 4-ի որոշումը մասնակիորեն բեկանել և փոփոխել համապարտության կարգով <<ԿԱԿԱԴՈՒ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից և Գեղամ Վիտալիի Քոչարյանից հոգուտ <<Արցախբանկ>> փակ բաժնետիրական ընկերության գանձել ժամկետանց վարկի գումարի նկատմամբ մինչև պարտավորության դադարման օրը 18 տոկոս տարեկան տոկոսադրույքով հաշվարկվող տոկոսագումարը, ինչպես նաև տույժերը:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշումը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ:

2.Պետական տուրքի հարցը համարել լուծված:

3.Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Վ.ՀՈՎՍԵԹՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

Գ.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ